ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1227-24.12.2025-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկվում է Քրեական օրենսգրքի 251.1-ին հոդվածի 1-ին մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «1. Վերահսկելի մատակարարումը և գնումը ապրանքների և ծառայությունների շրջանառության վերահսկումն է՝ ապրանքներն ու ծառայությունները գնելու կամ այդպիսիք վաճառելու միջոցով:»:	Առաջարկն ընդունվել է:	Ընդունվել է:
2.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկվում է նախատեսվող գաղտնի քննչական գործողության կատարման շրջանակը սահմանափակել միայն ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ, 393-րդ, 394-րդ և 405-րդ հոդվածներով նախատեսված հանցամանքների վերաբերյալ վարույթներով:	Առաջարկն ընդունվել է:	Ընդունվել է:
3.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 5-րդ հոդված	ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ գաղտնի քննչական գործողությունները կարող են կատարվել ծանր կամ առանձնապես ծանր, ինչպես նաև կաշառք ստանալու կամ կաշառք տալու ենթադրյալ հանցամանքների վերաբերյալ վարույթներով: Հիշյալ նորմում առաջարկվում է բոլոր գաղտնի քննչական գործողությունների համար սահմանված ընդհանուր կանոնից նախատեսել բացառություն վերահսկելի մատակարարում և գնում գաղտնի քննչական	Առաջարկն ընդունվել է:	Ընդունվել է:

			գործողության համար՝ սահմանելով, որ վերջինս կարող է կատարվել միայն վերը նշված հանցանքների վերաբերյալ վարույթներով:		
4.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մասով՝ «Սույն օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված գաղտնի քննչական գործողությունները կարող են կատարվել՝ 1) այն ֆիզիկական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր. 2) մեղադրյալի նկատմամբ. 3) այն իրավաբանական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի կողմից:»:	Առաջարկն ընդունվել է:	Ընդունվել է:
		Նախագիծ	Հիմնավորումը խմբագրվել է:		Ընդունվել է: